

Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինքնուրույն և գործնական
աշխատանքների կազմակերպումը
մաթեմատիկայի դասերին

Ուսուցչուհի՝ Նատալիա Դավթյան

Ղեկավար՝ Աիդա Խալաթյան

Վայք 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....	4
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....	9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	14
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հ հանրակրթության պետական կրթակարգում սովորողին և դասավանդողին ներկայացվող պահանջներում ամրագրված է ստեղծագործելու, հետազոտելու կարողության պահանջը:

Ուսուցման գործնթացի կազմակերպման նոր պայմանները, երբ դասավանդողը և դասագիրքը դադարել են տեղեկատվության հիմնական աղբյուրը լինելուց, երբ սովորողներն ավելի արագ են յուրացնում նոր ուսուցման միջոցները, քան դասավանդողները, երբ սովորողին ներկայացվող պահանջներում շեշտը մտապահելու կարողությունից տեղափոխվել է կիրառական հմտություններին, երբ կարևորվում է անընդհատ սովորելու, անհրաժեշտ տեղեկատվությունն արագ գտնելու, մշակելու կարողությունները, պահանջվում են ուսուցման գործընթացի նորովի մոտեցում:

Սովորողի գործունեությունը պետք է ուղղված լինի նոր պահանջներին համապատասխան կարողությունների ձևավորմանը: Սովորողի մոտ ստեղծագործելու, հետազոտելու կարողություններ զարգացնելու անհրաժեշտություն է առաջացել: Այդպիսի հատկությունները ձևավորվում և զարգանում են ստեղծագործական, հետազոտական աշխատանքներ կատարելու ընթացքում: Այդ աշխատանքների նպատակը բոլորին գիտական կամ արվեստագետ դարձնելը չէ, այլ սովորողի ազատ ստեղծագործական աշխատանքի միջոցով նրա անձի զարգացումը: Կարևորվում են անհատական, շերտավորված, գործնական ու ինքնուրույն աշխատանքները:

Խորհրդային մանկավարժ-նորարար Վ. Շատալովը նշել է, որ «դասարանում հաջողակ ուսուցման համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որում անհնար է չսովորել»

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ



Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը

դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Տարրական դասարաններում դասերի ընթացքում գերակշռում է ուսուցման ճակատային «ֆրոնտալ» ձևը, երբ աշակերտների գործողությունները հիմնականում կախված են ուսուցչի անմիջական հրահանգներից: Այդ գործողությունները հիմնականում կատարվում են գրատախտակի մոտ: Այսպիսի գործողությունները արգելակում են երեխաների զարգացումը, և արդեն V դասարանում սովորողները հայտնվում են անօգնական վիճակում՝ գրքի շուրջ իրականացվող ինքնուրույն աշխատանքի, առաջադրանքների ինքնուրույն լուծման, ստեղծագործական բնույթի աշխատանքների կատարման ընթացքում: Առաջադրանքների ծավալը նրա ուժերից վեր է դառնում, աշխատանքի տեմպը՝ դանդաղ:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառություն

1. Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ բառարաններ, հանրագիտարաններ և այլն: Տարրական դասարաններում մեծ տեղ է հատկացվում գրքի, գեղարվեստական տեքստի, նկարազարդման շուրջ կատարվող ինքնուրույն աշխատանքին: Գրքի շուրջ ինքնուրույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողություններից է: Առանց այդ կարողության յուրացման հնարավոր չէ իրականացնել գիտելիքների լիարժեք յուրացումը քանի որ յուրացման գործընթացի կարևոր կառուցվածքային տարրերը, ինչպիսիք են՝ իմաստավորումը և ամրապնդումն իրականացվում է դասագրքի շուրջ կատարվող աշխատանքի ընթացքում: Գրքի շուրջ աշխատելու անկարողության պատճառով ուսումնական աշխատանքն աշակերտի համար դառնում է տանջալի աշխատանք: Գրքի շուրջ աշխատելու կարողությունների զարգացումն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում:
2. Շարադրություններ՝ ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ և այլն:
3. Դիտումներ և գործնական աշխատանքներ: Դիտումների համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները և երևույթները: Սովորողները հաշվում են , չափում, ստեղծում: Նրանք

դիտարկում են առարկաները և երևույթները անմիջականորեն բնության մեջ, անցկացնում են փորձեր՝ կատարելով գործնական աշխատանքներ:

4. Դիտարկումների, փորձերի, գործնական և լաբորատոր աշխատանքների հետ կապված ինքնուրույն աշխատանքները ունեն շատ մեծ նշականություն, քանի որ նպաստում են աշակերտների դիտողականության, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:
5. Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառման
6. Գրաֆիկական աշխատանքներ
7. Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Սովորողները պատրաստում են ինքնաշեն գրքեր «Տեխնոլոգիա» առարկայի ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

Ինքնուրույն աշխատանքի օրինակ մայրենիի դասին



Ինքնուրույն աշխատանք


Ամիս , ամսաթիվ _____

Դասարան 3-րդ _____



Անուն , ազգանուն _____

1.Նկարներին համապատասխան գրի՛ր հականիշ բառեր : (2 մ.)












2. Պատկերների փոխարեն գրի՛ր համապատասխան տառերը և լուծի՛ր գաղտնագիրը:
(4 մ.)



_____:

3. Գուշակի՛ր, թե ինչ բառեր են թաքնվել նկարներում և գրի՛ր: (4 մ.)

	+	
	<u>նա</u>	
	<u>յա</u>	



+ա+



_____:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱԱՆՆԵՐՈՒՄ



Ինչպես գիտենք՝ ձևավորող գնահատման հիմնական նպատակը ուսուցման և ուսումնառության բարելավումն է, ինչը հնարավոր է սովորողի՝ սեփական կրթության մեջ ակտիվ դերակատարում ունենալու պարագայում: Մասնակիցը լինելով սեփական ուսումնառության պլանավորման, իրականացման և վերլուծության փուլերին՝

սովորողը նպատակային սովորում է սովորել:

Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար:

Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- վերարտադրողական, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը (օրինակ՝ քարտեզի վրա ցույց տալ քաղաքներ, գետեր, լճեր և այլն),
- մասամբ որոնողական, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը (օրինակ՝ տրված տեղանունները, գետերը, լճերը և այլն պայմանական նշաններով պատկերել քարտեզի վրա),

- ստեղծագործական, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ (օրինակ՝ կազմել տեղանքի քարտեզը, ինչի համար սովորողը պետք է դրսևորի ոչ միայն մեկ, այլ մի քանի առարկաների, այլև վերառարկայական հմտություններ):

Վերոնշյալից արդեն պարզ է դառնում, որ գործնական աշխատանքները բազմազան են՝ պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիայի ընթացքում տեսածի ու լսածի ներկայացում աղյուսակի, ֆիլմի, ակնարկի տեսքով, երգի հորինումից մինչև նախագծի իրականացում, արդյունքների ներկայացում ու կիրառում:

Նշված գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատապես, այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում, դպրոցում, տանը կամ այլ վայրում, գնահատվել միավորով կամ բառային բնութագրումներով: Արդյունքները կարող են ներկայացվել սովորողի կամ սովորողների խմբի ընտրությամբ՝ նպատակից ելնելով:

Որպես գործնական աշխատանքի տեսակ ներկայացնենք դերային խաղը, որն ունի կիրառման լայն հնարավորություններ և հաճախություն ուսումնական տարբեր առարկաների շրջանակում: Սակայն պետք է անկեղծորեն նշել, որ դերային խաղը ոչ միշտ է կիրառվում նպատակային, կամ որ ավելի ճիշտ կլինի ասել՝ ոչ միշտ է լիարժեքորեն իրացվում դերային խաղի ներուժը: Այն իրականում շատ ավելի լուրջ ու լայն հնարավորություններ է տալիս յուրաքանչյուր սովորողի իմացական և հուզականային որակների զարգացման, քննադատական մտածողության, իրավիճակում կողմնորոշվելու, ինքնարտահայտվելու և ինքնադրսևորվելու համար:

Տարրական դասարաններում նախատեսվում է անցկացնել հետևյալ տիպի գործնական աշխատանքներ.

- ✚ երկրաչափական պարզագույն պատկերների կառուցումներ՝ քառակուսի, շրջան, եռանկյուն, հատված, ուղիղ,
- ✚ չափման գործիքների (մետր, քանոն, կարկին, ժամացույց, ջերմաչափ, կշեռք և տեխնիկական այլ սարքեր) օգտագործում,
- ✚ մեծությունների չափում՝ ծավալ, մակերես, զանգված, տարողություն, արժողություն,

- ✚ տրված պատկերներից կամ մարմիններից նոր պատկերների, մարմինների ստացում,
- ✚ հարցումների, դիտարկումների միջոցով տվյալների հավաքագրում և օգտագործում աղյուսակների միջոցով,
- ✚ մոդելների, ձևանմուշների և մակետների պատրաստում,
- ✚ չափման արդյունքում ստացված տվյալներին համապատասխան քարտեզագծումներ,
- ✚ մաթեմատիկա առարկայի դասավանդման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ստեղծում՝ պաստառներ և այլն:

Դիտարկենք գործնական աշխատանքի օրինակ առաջին դասարանում:

Անկաշկանդ զրույցի միջոցով (ցանկալի է առաջին դասարանում ուսուցման սկզբում) ուսուցիչը երեխային առաջարկում է կատարել մի քանի գործնական առաջադրանք՝ բացահայտելու համար, թե աշակերտը գիտելիքների ու կարողությունների ինչ պաշար ունի: Առաջադրանքները կարող են լինել հետևյալ բնույթի:

1. Կարո՞ղ ես արդյոք հաշվել: Հաշվի՛ր այս նկարները: Այստեղ քանի՞ նկար կա (10-15 հատ):
2. Ձախ ձեռքում բռնի՛ր նույնքան մատիտ, որքան կա սեղանի վրա (10-15 հատ):
3. Իմացի՛ր, թե որ շրջաններն են շատ՝ կապույտները, թե կարմիրները (6 մեծ կարմիր և 7 փոքր կապույտ):
4. Դիտի՛ր նկարը («Պապն ու շաղգամը») ասա՛, թե ով է շնիկից առաջ, կատվից հետո, թռնիկի և կատվի միջև:

Այն դեպքում, երբ աշակերտը հաջողությամբ է կատարում գործնական աշխատանքները, կարելի է նրան առաջադրել մեկ-երկու հարց այն նյութի վերաբերյալ, որը պետք է սովորել, օրինակ, 10-ի սահմաններում գումարման և հանման վերաբերյալ օրինակներ կամ խնդիրներ, երկրաչափական պատկերները զանազանելու և անվանելու, թվերի իմացությունը ստուգելու և այլ առաջադրանքներ:

Ստացված տեղեկությունները օգտակար է աղյուսակի մեջ այնպես լրացնել, որ հետագայում ուսուցիչը դրանք կարողանա օգտագործել դասերի ժամանակ՝ երեխաների հետ ինքնուրույն աշխատանք անցկացնելիս:

Գործնական աշխատանքները հիմնականում անցկացվում են երկու ձևով:

Առաջին ձևի գործնական աշխատանքի դեպքում հարցվող աշակերտը դասարանի մյուս աշակերտների ներկայությամբ կատարում է գործնական ինչ-որ առաջադրանք, որն ուղեկցվում է բացատրություններով: Դասարանի մյուս աշակերտները հետևում են բացատրությանը և անհրաժեշտության դեպքում կատարում համապատասխան շտկումներ և մեկնաբանություններ:

Երկրորդ ձևի գործնական աշխատանքների դեպքում սովորողների կարողությունների և հմտությունների ստուգումը կատարվում է միաժամանակ՝ յուրաքանչյուր աշակերտին տալով անհատական կամ տարբերակված առաջադրանք: Այս դեպքում նախընտրելի է, որ աշխատանքները կատարվեն այդ աշխատանքների համար նախատեսված առանձին տետրում, որն ուսուցիչը ստուգում և գնահատում է դասի ընթացքում կամ դասերից հետո:

Տեղանքում իրականացվող գործնական աշխատանքներն իրականացվում են խմբային մեթոդների կանոններով:

Գործնական աշխատանքների անցկացման տևողությունը սահմանվում է 5-15 րոպե:

Ուսումնառության ընթացքում իրականացվող գնահատմամբ բացահայտվում և վերլուծությունների միջոցով վերահսկվում են ուսուցման արդյունքների որակը և դրանց համապատասխանությունը հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների պահանջներին:

Գնահատման նոր համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հանրակրթական պետական կրթակարգի» այն պահանջով, համաձայն որի՝ հանրակրթության որակը բարելավելու և ազգային արժեքներ կրող, ժողովրդավարական հասարակության քաղաքացի ձևավորելու համար անհրաժեշտ է, ի թիվս այլ միջոցառումների, նաև մշակել և ներդրել հանրակրթական դպրոցի գործունեության, ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունքների գնահատման համապատասխան համակարգ:

2009-2010 թվականներին ՀՀ հանրակրթական դպրոցներում ներդրվեց սովորողների ընթացիկ գնահատման միայն միավորային գնահատման բաղադրիչը, իսկ հաջորդ ուսումնական տարուց՝ նաև ուսուցանող գնահատումը: Սովորողները գործնական

աշխատանքների համար գնահատվում են միավորներով: Գործնական աշխատանքները կարող են հանձնարարվել ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակի, անձնային որակների ստուգումը և դրա հիման վրա ուսումնական գործընթացի կատարելագործման և ուսման որակի վերահսկումն է: Որպես ուսումնական աշխատանքի տեսակ՝ գործնական աշխատանքը նույնպես գնահատվում է միավորներով կամ որակական բնութագրումով: Հայտնի և տարածում գտած ձևերից մեկն այն է, որ առաջադրանքը տրոհվում է ենթաառաջադրանքների: Օրինակ՝ սովորողներին տրվում են սովարաթղթից պատրաստված տարբեր պատկերներ և հանձնարարվում է կատարել չափումներ, որոշել պատկերի մակերեսը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ



Ինքնուրույն և գործնական աշխատանքների կազմակերպումը դասընթացի կարևոր բաղադրիչներից մեկն է: Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում գործնական և ինքնուրույն աշխատանքների ներառումը հնարավորություն է տալիս արմատապես բարելավելու սովորողների լեզվատրամաբանական մտածողության զարգացման խնդրի լուծումը, հիմք ծառայում դասընթացի թերությունները վերացնելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար, ստեղծում է սովորողների դաստիարակության և արժեհամակարգի ձևավորման հատկություններ:

Ուսուցման արդյունավետության բարձրացմանը նպաստում է մեթոդական համակարգի հարստացումը այնպիսի գործնական և ինքնուրույն աշխատանքներով, որոնց օգնությամբ գործողությունները վերացական ձևերի մակարդակից փոխադրվում են պատկերային ընկալումների մակարդակ՝ միաժամանակ ստանալով հստակ ձևակերպումներ:

Կարևոր է պահպանել ձևավորող գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին. առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Է., Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա, Երևան, 2016:
2. Իստոմինա Ն. Բ., Տարրական դասարաններում մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2000:
3. Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան, Մայրենիի դասերի պլանավորումը, «Զանգակ» հրատարակչություն, 2016թ.
4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.
5. Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2011թ.
6. Հանրակրթության պետական չափորոշիչ, ԿԳՆ Տեղեկագիր, N 5, 2011:
7. Մաթեմատիկա. Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2007:
8. Մաթեմատիկական կրթության 4-րդ միջազգային գիտաժողով, 14-15 հոկտեմբեր, Երևան, 2016:
9. Блонский П. П., Развитие мышления школьников, Москва, 1935.